



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունիսի 2012 թվականի N 792 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1999 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 662 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ալցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ալցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ալցիզային նոր նմուշի դրոշմանիշերով դրոշմավորման մասին» N 662 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման՝

ա. 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Ժ⁵» ենթակետով.

«Ժ⁵) «ներմուծողների մոտ առկա «2008» թվագրմամբ ալցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի:»,

բ. 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Ժա⁹» ենթակետով.

«Ժա⁹) 2013 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում արգելվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը.».

2) որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգի՝

ա. 6-րդ և 20-րդ կետերում «դեպքերի» բառերը փոխարինել «, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք չդրոշմավորված սիգարների կամ մինչև 25000 շիշ ակոհոլային խմիչքների ներմուծման դեպքերի:» բառերով,

բ. 8-րդ կետի «բ» ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք չդրոշմավորված սիգարների կամ մինչև 25000 շիշ չդրոշմավորված ակոհոլային խմիչքների ներմուծման դեպքում սույն ենթակետում նշված պայմանագրի փոխարեն ներկայացվում է ապրանքներն ուղեկցող փաստաթղթերի պատճենը (փոխադրման ամփոփագիր, հաշիվ-ապրանքագիր և բեռնագիր):»,

գ. 15-րդ կետում «դեպքերի» բառը փոխարինել «, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք սիգարների կամ մինչև 25000 շիշ ակոհոլային խմիչքների ներմուծման դեպքերի: Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք սիգարների կամ մինչև 25000 շիշ ակոհոլային խմիչքների ներմուծման դեպքում դրոշմավորումն իրականացվում է մաքսային հսկողության տարածքներում:» բառերով,

դ. 17-րդ կետում «Ժամանակ» բառը փոխարինել «, իսկ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք սիգարների կամ մինչև 25000 շիշ ակոհոլային խմիչքների ներմուծման

դեպքում «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հայտարարագրման ժամանակ:» բառերով,

ե. 23-րդ կետը «օրը» բառից հետո լրացնել «, բացառությամբ սիգարների և 25000 շիշ ակոհոլային խմիչքների ներմուծման դեպքերի:» բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի «Ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը կիրառությունից հանելու և այդ դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումն արգելելու մասին» N 61I-Ն որոշման 2-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2012 թ. հուլիսի 2
Երևան



Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՆԵՐՄՈՒԾՈՂՆԵՐԻ ՄՈՏ ԱՌԿԱ «2008» ԹՎԱԳՐՄԱՄԲ ԱԿՑԻԶԱՅԻՆ
ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ
ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են ներմուծողների մոտ 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա՝ «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման հետ կապված հարցերը:

2. 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ ներմուծողների մոտ առկա՝ «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների (ինչպես չիրացված, այնպես էլ գնորդների կողմից վերադրոշմավորման նպատակով վերադարձված) քանակի, դրանց վրա փակցված ակցիզային դրոշմանիշերի համապատասխանությունը պետական եկամուտների կոմիտեից սահմանված կարգով ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերի հետ ճշտելու նպատակով դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծողները մինչև 2012 թվականի դեկտեմբերի 20-ը դիմում են ներկայացնում ակցիզային հարկով հարկվող ապրանքների մասնագիտացված մաքսատուն և իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն: Դիմումն ընդունվելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների մնացորդները գույքագրվում են մաքսատան և հարկային տեսչության ներկայացուցիչների մասնակցությամբ, իսկ «Ներմուծում մաքսային պահեստ» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծված դրոշմավորված ապրանքները՝ ներմուծողի, մաքսատան և մաքսային պահեստի ներկայացուցիչների մասնակցությամբ և կազմվում է գույքագրման ակտ:

Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծողները վերադրոշմավորման նպատակով գնորդներից ընդունում են իրենց տրամադրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված և իրենց կողմից դուրս գրված հաշիվ-ապրանքագրերով առաքված ապրանքները: Նշված ապրանքները պետք է ընդունվեն և վերադրոշմավորումից հետո վերադարձվեն գրավոր կազմված ընդունման-հանձնման ակտի համաձայն, որում պարտադիր պետք է նշվեն մինչև վերադրոշմավորումը և վերադրոշմավորումից հետո ապրանքային մնացորդների վրա փակցրած ակցիզային դրոշմանիշերի սերիան ու համարը, ինչպես նաև առաքված ապրանքների հաշիվ-ապրանքագրերի համարները, ամսաթիվը և առաքումների գրանցման գրքի էջի համապատասխան տողի համարը: Ներմուծողների մոտ գնորդների կողմից վերադրոշմավորման նպատակով վերադարձված ապրանքների մասով իրականացվում է առանձնացված հաշվառում:

Գույքագրման արդյունքների հիման վրա կազմված ակտում նշված ապրանքների քանակը համարվում է նոր նմուշի ակցիզային դրոշմանիշերով վերադրոշմավորման ենթակա քանակ: «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների մնացորդների գույքագրման ակտերի մեկական օրինակները պահվում են ներմուծողի մոտ, մաքսատանն ու հարկային տեսչությունում, իսկ «Ներմուծում մաքսային պահեստ» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների գույքագրման ակտերի մեկական օրինակները պահվում են ներմուծողի մոտ, մաքսատանն ու մաքսային պահեստում:

3. «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների մնացորդները վերադրոշմավորելու նպատակով ներմուծողներն ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերը ձեռք են բերում վերադաս մաքսային մարմնից ներկայացնելով դիմում համաձայն N 1 ձևի, «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների մնա-

ցորդների մասին տեղեկանք՝ համաձայն N 2 ձևի, գույքագրման ակտի ու մաքսային հայտարարագրերի պատճենները:

4. Վերադրոշմավորումը կատարվում է դրոշմավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վերադրոշմավորումը կատարվում է մաքսատան և հարկային տեսչության ներկայացուցիչների մասնակցությամբ: Վերադրոշմավորումից հետո կազմվում է տեղեկանք՝ 3 օրինակից, վերադրոշմավորված ապրանքների քանակի (ինչպես նաև ըստ համարների և ըստ տարողությունների օգտագործված (վնասված) ակցիզային դրոշմանիշերի) մասին: Տեղեկանքի մեկական օրինակը՝ հաստատված մասնակիցների ստորագրություններով, տրվում է ներմուծողին, մաքսատան ու հարկային տեսչության ներկայացուցիչներին:

«Ներմուծում մաքսային պահեստ» մաքսային ռեժիմով ձևակերպված ապրանքների վերադրոշմավորումից հետո՝ «2013» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերի համար դրոշմանիշերի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է վերադրոշմավորված ապրանքների «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպված մաքսային հայտարարագրի և սույն կետում նշված տեղեկանքի հետ միասին:

5. Վերադրոշմավորման համար հատկացված ակցիզային դրոշմանիշերը հաշվառվում են առանձին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

(վերադաս մաքսային մարմնի անվանումը)

Գրանցման N _____

Դ Ի Մ ՈՒ Մ

ՎԵՐԱԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐԻ
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու վայրը)

(բանկային տվյալները, ՀՎՀՀ-ն, պետական ռեգիստրում գրանցման համարը)

կազմակերպությունում «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման համար խնդրում եմ տրամադրել ակցիզային դրոշմանիշեր՝ ընդամենը _____ հատ՝ ըստ կից ներկայացվող տեղեկանքում նշված տեսակների և քանակի, այդ թվում՝ անմիջական ներմուծված՝ չիրացված ապրանքային մնացորդի համար՝ _____ հատ, գնորդների կողմից վերադրոշմավորման նպատակով հանձնված ապրանքների համար՝ _____ հատ:

Տվյալ ակցիզային դրոշմանիշերն անհրաժեշտ են կազմակերպությունում առկա՝ «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման համար:

Կազմակերպության կողմից ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարը մուտքագրվել է _____ հաշվին՝ վճարային փաստաթղթով

_____ 20--թ., ընդամենը _____ դրամ:

(տառերով)

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգին ծանոթ ենք:

Կազմակերպության տնօրեն _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ. _____ 20--թ.

(վերադաս մաքսային մարմնի անվանումը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2013 ԹՎԱԿԱՆԻ _____ -Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ՝ «2008»
ԹՎԱԳՐՄԱՄԲ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՎԱԾ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(հիմք՝ գույքագրման ակտ N _____ կազմված _____ 20-- թ.)
Գրանցման N _____ 20-- թ.

(կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու վայրը)

(բանկային տվյալները, ՀՎՀՀ-ն, պետական ռեգիստրում գրանցման համարը)

Ներմուծված չիրացված ապրանքային մնացորդի համար

NN ը/կ	Ապրանքի անվանումը	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Տարայի տարողությունը	20--թ. _____-ի դրությամբ ապրանքային մնացորդը (շիշ, տուփ)

Գնորդի կողմից վերադրոշմավորման նպատակով հանձնված ապրանքների համար

NN ը/կ	Ապրանքի անվանումը	ԱՏԳ ԱԱ -ի ծածկագիրը	Տարայի տարողությունը	20-- թ. _____-ի դրությամբ ապրանքային մնացորդը (շիշ, տուփ)

Կազմակերպության տնօրեն _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ. _____ 20--թ.

